

77/8

777

Ա. Պ. ԳԱՅԵՐԻՑՈՎԻ

ՍՈՎՈՐԵՑԵՔ ՊԼԱՆՈՎ

ԱՇԽԱՏԵԼ

(ՁԵՐՆԱՐԿ ՍՊԱՌԿՈՊՊԵՐԱՅԻՆ
ԱԾԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Թուսերենից բարգմանից
Գ. ՆԱԶԱՐԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՎԻ

ՅԵՐԵՎԱՆ

1927

18 JUL 2017


Ա. Պ. ԴՆԵՊՐՈՎՍԿԻ

ԱռՎՈՐԵՑԵՔ ՊԼԱՆՈՎ

ԱշԽԱՏԵԼ

(ՁԵՌՆԱՐԿ ՍՊԱԾԿՈՂՊԵՐԱՑԻԱՅԻ
ԱՇԽԱՏՈՂ ՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Թուժենելից բարգմանեց
Գ. ՆԱԶԱՐԵՏՅԱՆ



I. ԿՈՐՊԵՐԱՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԺՐԱԳՐՎԱ- ՇՈՒԹՅՈՒՆԸ

1. Ի՞նչ ԲԱՆ Ե ՊԼԱՆԸ. ՊԼԱՆԻ ՆՅԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սպասողական ընկերության առևտրական ու ֆինանսական աշխատանքը ծրագրված (կամ պլանով) տանել, —այդ նշանակում է նախորոք հաշիվ անել, թե ընկերությունը վորոշ ժամանակա- ժրձանում (կես տարում, յուամսյակում, մի տարում) ինչ շրջանա- ռություն կարող է ունենալ, վաճառքի համար ի՞նչ ապրանքներ պիտի ձեռք բերի՝ ի նկատի առած ազգարնակության պահանջ- ները. ընկերությունն ի՞նչ հայելումներ կարող ե անել վաճառելիք ապրանքներին, ի՞նչ ծախսեր են պահանջվում գործող ապարատի (ծառայողների ու բանվորների) պահպանման համար և, գլխա- վորը, թե ընկերության արամագրության տակ ի՞նչ սեփական ու փոխառու միջոցներ պիտի լինեն, վորակեսի նա կարողանա յեն- թաղրած շրջանառությունը լրիվ կերպով իրականացնել և արդյոք՝ անհրաժեշտ գրամական միջոցները բերելու համար հնարավորու- թյուն կտ՝, թե վո՞չ:

Կարձ առած՝ պլանը նախորոք կատարված յենթագրական հա- հաշիվ և այն մասին, թե սպասողական ընկերությունը յուր առա- ջիկա աշխատանքն ինչպես պիտի տանի:

Տանել առանց այդպիսի նախնական հաշիվ տնտեսական վորեկ- գործ, այն ել հասարակական գործ, —անկարելի յե։ Այն սպասո- ղական ընկերությունը, վոր առանց նախորոք մշակած ծրագրի յե աշխատում, նման և ընդարձակ ծովում բաց թողնված անդեկ մի նավի։ Շատ ե պատահում, վոր սպասողական ընկերություն- ները թակարգի մեջ են ընկնում, գառնում են անվարկունակ, յեր- բայմն նույնիսկ սնանկանում են, —և այդ միայն այն պատճառով, վոր աշխատանքը տանում են առանց նախնական առողջ հաշիվ։ յենթագրությամբ առաջնորդվելով, և, որինակ՝ վարկագործելով իրանց ուժերից վեր դումարներով, գնելով վո՞չ այն ապրանքներն

ՀԱՅՊԵՏՔՈԼԵԳԻՐԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրատեսք · 106р.

Գիսա · 4992

Տիրամ 1000



11243599

ինչ վոր հարկավոր ե և վոչ այնքան՝ ինչքանի պահանջ կա, —իրենց շրջանառությունից վեր ծափակը են անում ծառայողների վրա և այն:

Այսու, յերբ մեր Խորհրդային Միությունը շատ մեծ դժվարությաններով յուր տնտեսությունն ե վերականգնում, այդ տնտեսության բոլոր ճյուղերում ծրագրվածությունը, պլանավորված էնելը, ճիշտ ու իւելացի հաշվառումը հսկայական նշանակություն ունեն: Վոչ մի տնտեսական կազմակերպություն առանց պլանի և ծրագրից դուրս չի կարող ապրել. առանց պլանի չի կարող ապրել տնտեսականդ կոոպերացիան, վոր՝ իրը հասարակական մի ույժ՝ կոչված և դրազական հասարակական կյանքը կոլեկտիվ (խմբական) հիմունքների վրա գնելու:

Պիտի ի նկատի առնել, վոր մեր յերկրում շրջանառության միջոցների մեծ պակասություն կա, մանավանդ կոոպերացիայի համար. Հենց այդ պատճառով ե, վոր այդ միջոցները պիտի պատվեն ինչքան կարելի յե ավելի արագ, տնտեսական աշխատանքն այնպես պիտի տանել, վոր ամենավայր շրջանառու միջոցներով ամենամեծ հաջողությունները ստացվեն և կասարվեն ամենամեծ տնտեսական շրջանառությունները:

Բացի շրջանառու միջոցներից՝ կոոպերացիան ել ի՞նչ դժվարությունների հետ և ընդհարվում:

Վարկերը կարձ ժամանակով են արվում, չուկայում ապրանքների պակասություն և լինում և մասնավոր տնտեսություն ուժեղ մըրցման մեջ և կոոպերացիայի հետ, —աչտ համարյա բոլոր դիմացորդ դժվարությունները:

Պարզ ե, վոր միայն իւելացի ու ճիշտ կազմված պլանի մեջ կարելի յե այդ բոլոր դժվարությունները նախատեսել և ոպտուզական ընկերության աշխատանքն այդ դժվարությունների հետ համաշխատել:

Սպառողական ընկերության գործնական աշխատանքը, մեջ յերեք չպիտի մոռանալ ժողովրդական իմաստուն ստացվածքը, մե «վոտքերդ վերմակիդ չափով մեկնիր», —պլան կազմելիս ել այդ զրաւթյունից պիտի յելնել:

Պլան այնպես պիտի կազմել, վոր նրա մեջ արաւաշայտի իրականությունը, այսինքն այն, ինչ վոր կա, ինչին վոր կարելի յե համել տնտեսությունները վորեւ վնաս հասցնելու: Ուրիշ խոռոչ ուսած՝ պիտի կազմել իրական պլան և վոչ թե «իւելքից փչած», յերեք աղայական պլան:

Զի կարելի առել, թե կոոպերացիան բոլորովին պլան չունի: Պլան գուցե և կա, բայց դժվարախոռությունն այն ե, վոր այդ պլանները մեծ մասով անպետք պլաններ են, վորովհետեւ կազմված են «հենց այնպես», —յերեակայությամբ: Ի հարկի, այդպիսի պլանները վոչ թե գործին ցանկալի ուղղություն են տալիս, այլ ընդհակառակը՝ համարյա թե միշտ հակառակ հետեանքի յեն հատցրնում—գործի գրությունը վատանում ե:

Այսպես և պատահում նաև այն պատճառով, վոր հաճախ փորձու գիտություն չկա այն մասին, թե ինչպես պետք ե պլաններ կազմել: Մինչեւ այժմ պլան կազմելու տեխնիկան ինչպես հարկագործ և չի ծշակված: Ահա այդ նոր, լավ շատումնասիրված գործին և նվիրված ներկա զիրքը:

Հիմնական հարցն այն ե, վոր պլանը բազմակողմանի կերպով պիտի հիմնավորված լինի: Նրա մեջ յեղած բոլոր թվերը «առատաղից» չպիտի վերցնել (այսինքն խելքին զոռ տալով), այլ պիտի հիմնավորել այն իրականությամբ, վորի մեջ ապրում ու գործում և յուրաքանչյուր սպառողական ընկերություն:

Մասնավորապես՝ պլանը պիտի ընդպրկի սպառողական ընկերության գործունեյության բոլոր կողմերը, թե՛ տնտեսա-ֆինանսական, թե՛ կազմակերպչական ասպարիզում:

2. ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԸ

Սպառողական ընկերության պլանն ի՞նչ ժամանակաշրջանի համար պիտի կազմել:

Ըստհանրապես յերկար ժամանակի համար պլանային հաշվանկը ու յենթագրություններ անելը շատ դժվար բան ե. հեշտությամբ կարելի յե սխալվի: Մասնավանդ այդ դժվար և վարկավորման չուկայի դրության և այլ հարցերի հաճախակի փոփոխվու պայմաններում:

Մյուս կողմից՝ չի կարելի պլան կազմել նաև շատ կարձ ժամանակաշրջանների համար, քանի վոր մենք ստացինք, վոր պլանը պիտի ամեն կողմից հիմնավորված լինի, իսկ այդ կապված ե մի չափությունությունների հետ և պլան կազմելու տեխնիքական աշխատանքը պահանջում է վորոշ ժամանակ:

Ամենահարմար ժամանակաշրջանը, վորի համար պիտի պլան կազմել, մեր կարծիքով յեռամսյակն ե (կվարտալ—3 ամիսը):

Յեռամսյակներով և կաղմվում նաև Հայիոսովի գործունեցության պլանը, վորի հետ հարմար և կապել սպառողական ընկերությունների պլանները։ Յեռամսյակներով ընկերությունների հաշվներն եւ ավելի վերջացած ու ամբողջացած կարելի յէ արտահայտել։ Յեռամսյակներով կարելի յէ ընկերության գործերի ամելի լրիվ քննություններ կատարել և հրավիրել փայտաերերի ընդհանուր կամ լիազորական ժողովներ և այլն։

Բայց յերեք ամսվա պլանն եւ այնպես պիտի կաղմել, վոր նրա մեջ արտացոլվեն յուրաքանչյաւր առանձին ամսվա անելիքները։

Ի հարկի, բացի յեռամսյակային պլանից, պիտի կաղմել նաև ամբողջ տարվա պլան—սակայն տարեկան պլանը, ինչպես առում են, պիտի լինի մոտավոր, յենթագրություններ պիտի ունենա այն ժամանի, թէ ի՞նչ և անելու կոոպերատիվն ամբողջ տարվա ընթացքում։

Տարեկան պլանն ավելի շատ հարկավոր և փայտաերերի տարեկան ընդհանուր կամ լիազորական ժողովների համար, վորուղ բացի անցյալ հաշվական տարվա գործունեցության հաշվեավությունից, պիտի գեկուցել, թէ ընկերությունն ի՞նչ շրջանառություններ, յեկամուտներ ու ծախսեր և նախառենում նոր սկավող տարվա համար։

3. ՊԼԱՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Այժմ հարց և ծախսում, թէ յե՞րբ պիտի պլանները կաղմելու դորժին անցնել։

Ի հարկի, ավելի լավ կլիներ պլանը կաղմել մինչև սկսվող յեռամսյակը՝ այսինքն՝ այն յեռամսյակը, վորի համար յենթագրվում է պլան կաղմել։ Բայց այս գեազում առաջ և գալիս մի տեխնիքական գժվարություն, պատրաստ չեն լինի վոշ նոր յեռամսյակի սկզբի հաշվեկշիռը, վոչ եւ նախկին յեռամսյակի աշխատանքի արդյունքները, այլ և պարզ չի լինի, թէ վորքանով և իրականացված նախկին պլանը։ Հենց այդ պատճառով պլանը պիտի կաղմել նոր սկսող յեռամսյակի առաջին ամսվա 1-ից մինչև 5-ը և միայն մեծ սպառազական ընկերությունների համար մինչև 10-ը, այն եւ ծայրանկար գեազքերում և այն եւ այնպիսի հաշվով, վորպեսզի պլաննեն յեռամսյակի սկզբնական հաշվեկշիռը (յենթագրենք հոկտեմբեր-դեկտեմբեր, յեռամսյակի համար—առ 1-ն հոկտեմբերի հաշվեկշիռը) այլ և նախկին յեռամսյակի աշխատանքի ամփոփումը։

Յեռամսյակում ինչքան առգրանք և ծախմել, ինչ ըրջանառություններ են յեղել, ինչ համեմատմանք, վերադիրներ և այլն) կաղմված ինեն այդ մի քանի որվա ընթացքում։

Ընդհանրապես պիտի և ինկատի առնել, վոր պլան կաղմելը պիտի անհրաժեշտուրեն վերջացած լինի նշանակված ժամկետին, գորովհետեւ ուշ կաղմված պլանը գործնական վոչ մի նշանակություն չունի։

Ի հարկի, իսկական հաշվապահական գրքերից գուրու բերված հաշվեկշիռ յեռամսյակի առաջին որվա համար կարելի յէ կաղմել միայն այն ընկերությունների համար, վորոնց հաշվապահավությունը կանոնավոր հիմքերի վրա յէ ըրված և ինչպես առում են «առ որ ե» (առուր ե)։ Հենց այդ պատճառով՝ այն ընկերություններում, վորտեղ հաշվապահությունը հետ և մնում, վորտեղ յեռամսյակը վերջանալուց հետո՝ իսկույն հաշվեկշիռ կաղմելն անկարելի յէ, պիտի և կաղմել մոռավոր հաշվեկշիռ՝ վերցնելով վերջին հաշվեկշիռի առաջանքները և նրա մեջ մտցնելով այն ուղղումները, վորոնք ընկերության ամսի 1-ի գործերի փաստական դրությանը կհամապատասխանեն։ Թէ ի՞նչպես կաղմել այլպիսի մոռավոր հաշվեկշիռ՝ մենք ցուց կետապա վրուիներից մեկում։

Շատ ցանկալի յէ, վոր մինչեւ նոր պլանային յեռամսյակի սկզբելը, որինակ՝ վերջացող ամսվա 28-ին կամ 29-ին, ընկերության ունեցած ասբանքային մնացորդների ընդհանուր ցուցակագրությունը կատարվի, ինչպես և պարզվի, թէ զանձարկում ի՞նչ գումարներ կան։

Սպառազական ընկերությունների տարեկան պլանները պիտի կաղմել տարեհաշվի հետ միաժամանակ և համենայն դեպս, վոչ ուշ սկսվող անհետական տարվա առաջին ամսից։

Ընկերության գործունեցության պլան կաղմելու անհնիկական աշխատանքը տանում և ընկերության հաշվեատարը՝ ի հարկի, այս գործին մասիկ մասնակցություն պիտի ունենան պատասխանատու գործակատարներ (պլանի տարարական մոռաւմ և ընկերության գանձապահը (Փինանսական պլանը կաղմելին)։

4. Ի՞ՆՉՈՎ ՊԻՏԻ ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼ ՊԼԱՆԵՐԸ ԿԱԶՄԵԼԻՄ

Առարա-Փինանսական պլան կաղմելին՝ ձեռքի տակ պիտի առնենալ հետեւյալ առյաները։

1. Ի՞նչ սպառզական տարօպություն ունի ընկերության ընդգրկած շրջանը, այլ խոսքայ ասած—ընկերության շրջանի ազգարհակությունը և առաջին հերթին կոռուպտափիքի անագմներն ի՞նչ զումարի ապրանք կարող էն զնել յեռամսյակի ընթացքում։ Ի՞նչպիսի ապրանքների և ինչքանի՞ պահանջ ունի աղջարհակությունը։

2. Ի՞նչ սեփական և փոխառու միջոցներ ունի ընկերությունը նոր յեռամսյակի սկզբնական հաշվեկշռի համաձայն, այլ և ինչ միջոցներ Էն գրգած անշարժ կամ մեռյալ արժեքների մեջ, ինչպես և կոռուպտափիքի Փինանսական դրությունը, այսինքն կոռուպտափիքը գործառն վճարունակ է։

3. Սպառզական ընկերությունն ի՞նչ հնարավարություն ունի յուր սեփական շրջանառու միջոցներն ամելացնելու համար։ Ի՞նչ վարկեր կարող և ստանալ և վորտեղից՝ ի հարկե յուր վճարունակությունը պահպանելու պայմանու։

4. Ի՞նչքան ապրանք և յենթապրում ծախել ընկերությունը յեռամսյակի ընթացքում, վո՞րակեղից պիտի գնումներ կատարի և ինչ շափով (յուր Միությունից և այլ կազմակերպություններից)։

5. Անցյալ յեռամսյակի շրջանառության, վերադիր ծախսերի, համելումների և այլ թվական ավլոցներ։

Այս բոլոր տվյալները մենք անվանում ենք պլանի հիմնական նախագծանեներ։ Առաջ այդ տվյալների պլան կազմելն անկարգի յի։ Հենց այդ պատճառով՝ նախ քան պլան կազմելու ահինեկային անցնելը, մենք մանրամասն կանգ կառնենք ու կոպարզենք պլան կազմելու այդ հիմունքները։ այսինքն կծանոթանանք, թե ի՞նչպես պիտի Փինանսական դրության վերլուծում կատարել, ի՞նչպես պիտի նախկին յեռամսյակի ստեղծուկան աշխատանքի վերաբերմումը ամփոփումներ անել և այլն։

Թոփման հաշվեկշռություն կերպին հաշվեկշռություն և այն ակտիվ ու պաստիվ միջոցներից, վոր մենք պլան կազմելիս ունենալու յենք (գրամարկը, ապրանքներ, սեփական միջոցներ, փոխառու միջոցներ և այլն)։

5. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՑԻՆ ՀԱՅՎԵԿՇԵՐԸ

Պլանային յեռամսյակի սկզբի հաշվեկշռությունը մենք անվաներու մենք պլանային (սկզբնական) հաշվեկշռություն։ Պլանային ժամանակաշրջանը (յեռամսյակը) պիտի փակվի նույնպես պլանային փակման հաշվեկշռով։ Այս հաշվեկշռությունը մենք կանվանենք պլանային ամ-

II. ՍՊԱԾՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

I. ԽՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՅԵՌԱՄՄՅԱԿԻ ՍԿԶԲԻՆ ՊԼԱՆԱՑԻՆ ՀԱՇՎԵԿԾԻՒ ԿԱԶՄԵԼ

Ամեն մի կազմակերպության ֆինանսական գրության հայեցին, ի հարկե, նոր հաշվեկշխոն է: Ներկա գեղքում մենք գործ ենք ունենալու պլանային սկզբնական հաշվեկշխի հետ:

Ամենից առաջ, ի նկատի առնենք այն գեղքը, յերբ պլանային հաշվեկշխոր կազմվում ե մոտավոր, վարովչետե ընկերության հաշվապահությունը հետ ե մնում և անհնարին ե ամփսը վերջանաւուց հետո՝ անմիջապես (նոր սկզբած ամպատ 1-ին կամ 2-ին) տալ ճշգրիտ հաշվապահական հաշվեկշխո:

ՅԵՆԹԱՊՐԵՆՔ՝ մենք պիտի պլան կազմենք 1926 թվի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար: Հոկտեմբերի 1-ին մենք սկսում ենք պլան կազմել այնպիսի հաշվով, վոր մեր ամբողջ աշխատանքը վերջացնենք և վարչության հաստատությանը ներկայացնենք հոկտեմբերի 5-ին: Ինչպես վերեւում պայմանավորվեցինք՝ պլան կազմելու նախապատրաստական աշխատանքները մենք պիտի սկսենք նախորդ՝ նոր յեռամյակը զեռ չակաված: Մոտավորակես ամսի 28-ին կամ 29-ին մենք պիտի պարզենք խանութերի ապրանքային մնացորդները, պարաստերերի ու պարապանների հաշվելու դրությունը, պիտի ամփոփենք անցյալ յեռամյակի աշխատանքները՝ պարզելով, թե պլանն ի՞նչ չափով ե նրականացած, մի խոսքով՝ մենք պիտի կազմենք առ 1-ի հոկտեմբերի պլանային հաշվեկշխոր և նոր պիտի սկսենք այն վերուժել:

Այս հաշվեկշխոր կազմելու համար՝ մենք վերցնում ենք սեպտեմբերի 1-ի հաշվեկշխի ակտիվի ու պասսիվի առանձին հողվածները և ըստ այդ ավյախների դրության կազմում ենք հոկտեմբերի 1-ի հաշվեկշխոր: Այս գեղքում մենք ոգտվում ենք ոժանդակ գըրքերով և գանձարկի մնացորդը հանում ենք դանձապահի գրքից:

Ա. Գ. Տ. Բ. Ի. Վ.	Տարբերակություն թվական	Տարբերակություն թվական	Տարբերակություն թվական	Տարբերակություն թվական	Տարբերակություն թվական	Տարբերակություն թվական	Տարբերակություն թվական	
1. Կանոնիկ գրանդ:	200	250	50	—	1. Փայտավճարավենին 2. Հիմնական պրա- մատուրի.	1.400	1.560	160
2. Ապրանքաներ իւր- անուրի գնում:	7.400	7.590	190	—	2.230	2.250	20	
3. Մինչորդակա- րան ձեռնարկե- նուր (վառու, ձաւա- րան, ձափ լանութթ)	3.000	2.980	—	20	3. Պարագաների առաջարկություն 4. Պարագաների առաջարկություն 5. Աղօժեքամուր թթերի 6. Փայտ Համարական 7. » Համկողական- կուռմ:	1.190	1.190	—
4. Պարագաների առաջարկություն 5. Աղօժեքամուր թթերի 6. Զուտ սպուտ	1.800	1.684	—	116	4. Բանական անհ- ամուր համարական թթ) Աղջանդներ 5. Աղօժեքամուր թթերի 6. Զուտ սպուտ	2.920	2.545	375
7. » Համկողական- կուռմ:	100	100	—	—	5. Բիուր և համարական թթ) Աղջանդներ 6. Զուտ սպուտ	450	465	15
8. Պուր շարժական և անշարժ:	3.500	3.560	60	—	8. 20	700	120	
Հաշվեկշխոր:	16.350	16.514	300	136	Հաշվեկշխոր	16.350	16.514	495

ԴԱՆԱՐԺՈՒԹՅՈՒՆ. Ջինարդիների կահավորումն ու գործությունների ակտությունը հարցադր է նկատի 8-րդ հոդվածի 3 հիմքով:

(գրամարկղային գիրք), ապրանքների մնացորդը—փաստական ցուցակագրումից կամ գործակատարի տեղեկագրերից, պարտատերերի ու պարտապանների հաշիվները համապատասխան անձնական հաշվելներից և այլն։ Յեթե սեպտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը հաշվեկշռի հոդվածների մեջ փոփոխություն չի յեղել—պարզ է, վոր բոլոր հոդվածները սեպտեմբերի հաշվեկշռից հոկտեմբերի հաշվեկշռին ենք անցկացնում՝ առանց փոփոխության։

Այս գեղգում առանձին ձգբառություն անհրաժեշտ չի։ Անհրաժեշտ է, վոր ակտիվի մնացորդները (գրամարկդ, ապրանքագրապաններ և այլն) քիչ թե չատ ճիշտ արտացորդեն այդ հաշվեկշռի մեջ։

Պլանային հաշվեկշռոն առ 1 հոկտեմբերի 1926 թ. ստիստիկի ձեռք մենք տալիս ենք նախորդ յերեսում։

Աղյուսակը տես 11-րդ յնրեսում։

Այսպիսով այս տախտակը ցույց է տալիս, վոր սպասողական բնկերության հաշվեկշռը հոկտեմբերի 1-ին հավասար է 16.514 ռուբլու։

2. Ի՞ՆՉ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՆՔ ՎԵՐԼՈՒՄՈՒՄ ՀԱՇՎԵԿՇԻՐԸ

Այժմ մենք պետք ենք պարզենք, թե սպասողական ընկերության Փինանսական դրությունը ի՞նչպես է։ Արդյոք նույն վճարունակի է այսինքն, կարո՞ղ են գնված ապրանքների արժեքը ժամանակին վճարել։

Այդ հարցի պատասխանը մենք կստունանք միայն հաշվեկշռի մանրամասն վերլուծումից հետո։ Հաշվեկշռը վերլուծելունշանակում ենք պարզել, թե ակտիվի վո՞ր արժեքներն են զտնվում ըրչանառության մեջ—(այսինքն, վո՞ր արժեքներն են կազմում բնկերության ըրջանառու գրամագլուխիք) և վո՞ր արժեքները դրանքում են անշարժ գրության մեջ (այսինքն վոչ մասնակցություն չունին ըրջանառության մեջ)։ Ապա պիտի պարզել, թե արդյոք ընկերության սեփական գրամագլուխներով ծածկվում են անշարժ արժեքները և սեփական միջոցների ի՞նչ մասն է ըրջանառության մեջ մասնակցում և վերջապես,—քանի՞ որվա մեջ են ընկերության գրամագլուխը պտումում և արդյոք այդ ըրջանառու-

թյան արագությունը համապատասխանում է վարկավորման այն ժամկետին, վոր ընկերությանը արվում և ապրանքներ գնելիս։ Երջանառության մեջ սեփական միջոցների մասնակցությունը կամ նրանց բացակայությունը մի կողմից և դրամագլուխների ըրջանառության արագության և վարկավորման ժամկետների համապատասխան լինելը մյուս կողմից—մեզ ցույց կտան, թե սպասողական բնկերությունը վորքան վճարունակ է և նրա հաշվեկշռուր վորքան և լուծարքունակ (լիկիվիպնի)։

3. ՀԱՇՎԵԿՇԻՐԻ ԹՎԵՐԻ ԻԶԵՑՈՒՄԸ (Սպենկա) ԿԱՄ ՀԱՇՎԵԿՇԻՐԻ ԻՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԻ ՊԱՐՁՈՒՄԸ

Նախ քան վերև բերված հաշվեկշռը վերլուծման յենթարկելը՝ անհրաժեշտ է, վոր մենք մեկ-մեկ քննության յենթարկենք ակտիվի յուրաքանչյուր հոդվածը և աեսնենք թե յուրաքանչյուր գումար ակտիվում վորքան իրական է, այսինքն կարելի յե այդ զարձնել փող և այդպիսի գումար փողը համապատասխանում է արդյոք հաշվեկշռում ցույց տրված գումարին։ Թե՛, զուցե, այդ մենք գրամական արժեքը պիտի իջնենել, որինակ՝ սպասողական բնկերը պիտի պակասենել կամ անհուսալի պարտքերը պիտի գուրս դրել հաշվեկշռից և այլն։ Հաշվեկշռի այդպիսի քննությունը կոչվում է հաշվեկշռի զտում կամ մաքրում։ Կատարելով այդ զործողությունը՝ մենք ստանում ենք իրական հաշվեկշռը^{*)}։ Այս գեղգում չպիտի մուանալ, վոր ակտիվի արժեքների գների իջներն են գումարների ամեն մի փոփոխությանը պիտի մոտենալ ամենամեծ զգուշությամբ, կատարելով միայն այն գների իջնեցումներն ու գումարային փոփոխությունները, վորոնք թելազրվում են անհրաժեշտությունից ու հաստատվում են փաստաթղթերով։

^{*)}) Հաշվեկշռն անհրաժեշտ է գտել այստեղ ցույց տրված կարգով վոչ միայն ստարեկան պլան կազմելիս, այլ ընդհանուր առմամբ ամեն անգամ, յերբ մենք ցանկանում ենք սպասողական բնկերությունների հաշվեկշռի իրական արժեքների պատկերն սննենալ թե ակտիվ և թե պատիվ հոդվածների վերաբերմամբ։ Որինակ, հաշվեկշռի զտում պիտի կատարել տարեկան հաշվետվության կազմելիս, չիմանական քննության ժամանակ և այլն։

5. Արժեքայնը թղթի 250 ր.—Պետական 6%-ային փոխառության տոմսեր են. իրական արժեքը մնում է անփոփոխ:

6. Փայ Հայկապում 100 ր.—Եռոյնպես հաշվեկշռի մեջ անփոփոխ է մնում.

7. Փայ Համելոպահանկում 100 ր.—Եռոյնպես մնում է անփոփոխ:

8. Գույք շաբաթական և անշաբթ 3560 ր.—Գույքի մի մասն տուանձին մի ցուցակով 140 ր. արժողությամբ պիտի հաշվեկշռից զուրս դըել, վարովհետեւ այդ գումարի զանազան կահ կարասի և այլ գույքի բոլորովին մաշվել եւ արժեքազուրկ է գարձել: Մի այլ ցուցակով գույքի մի այլ մասի ընդհանուր արժեքը 580 ր. —պիտի իջեցնել 220 րուրլով— և հասցնել այն միջն 360 րուրլի: Յեզ վերջապես՝ բացի այս բոլոր իջեցումները, մնացորդ գույքի ընդհանուր արժեքից (3200 ր.) տարեկան 10%—ային սովորական արժեքի իջեցում ենք կատարում (ամորտիվացիա—արժեքի մասնակի հանդեցում կամ իջեցում) 320 ր. (3200×10=32000:100=320 ր.):

Ինչ վերաբերվում է հաշվեկշռի պասսիվ հողվածներին, ապա ի նկատի առնելով, վոր սովորական ընկերության պարտքերը պասսիվում արտահայտված են իրական թվերով—պասսիվի բոլոր գումարները հաշվեկշռի գաման ժամանակ պետք է թողնել անփոփոխ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՐԸ

Վերահիշյալ վարոփիտություններից հետո ընկերության իրական հաշվեկշռը հետեւյալ պատկերը կըստանա.

ԱԿՑԻՎԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ	Հաշվեկշռ պարզաբնակ ընտառիկ	Պիտի պարզաբնակ ընտառիկ	Ակցիա տված ընդունակ պարզաբնակ ընտառիկ	Ակցիա տված ընդունակ պարզաբնակ ընտառիկ	Ակցիա տված ընդունակ պարզաբնակ ընտառիկ
1. Պրամարկություններ	250	—	250	1,6	
2. Ապրանքներ	7.590	160	7.430	48,2	
3. Մանդամատակարարման ձեռնարկներ	2.980	70	2.910	18,8	
4. Պարտապաններ.					
ա) ընկե. անդամներին աված ավանդներ	540	—	540	3,4	
բ) գնարդներ	1.144	184	960	6,2	
5. Արժեքավոր թղթեր	250	—	250	1,6	
6. Փայ Հայկապում	100	—	100	0,6	
7. » Համկառպահներում	100	—	100	0,6	
8. Գույք	3.560	680	2.880	19,0	
	Հաշվեկշռ	16.514	1.094	15.420	100

Այս մենք պետք է վարչունք, թե 1094 րուրլի հաշվեկշռի գումարի իջեցումը պասսիվի վոր հողվածների հաշվից պիտի գուրս դրել:

Քանի վոր հաշվեկշռի մեջ ապրանքները ցույց են արված վաճառքի զնով, իսկ պատճիվում կա ապրանքների մնացորդի վրան յեզած հավելումի գումարը՝ 990 ր.—պարզ է, վոր փչացած ու գըներն իջեցրած ապրանքների՝ 160 ր. գումարը պիտի զուրս դրել հավելումի գումարից, վորպես մի քննու, վոր ապագային և վերաբերքաւմ:

Ենացած 934 րուրլին պիտի գուրս դրել հաշվեկշռի զուա ոգուափամարից՝ համապատասխան իջեցման յնթարկելով այն, իսկ յեթե այդ դրա ոգուափամարը չը բավարար է, այն դեպքում՝ հիմ-

Նական գրամագլուխց : Այստեղ , ի միջի այլոց , կարևոր է առել , զոր ակտիվի հոգվածների գումարների իջեցումն ի հաշիվ ընթացիկ տարվա կատարելն այնքան ել ձիշու չեւ : Պիտի տարրերից տարբա կատարելն այնքան ել ձիշու չեւ : Պիտի տարրերից տարբա կատարելն այնքան ել ձիշու չեւ : Պիտի տարրերից տարբա կատարելն այնքան ել ձիշու չեւ : Պիտի տարրերից տարբա կատարելն այնքան ել ձիշու չեւ :

Այդպես պիտի վարվել այն նպատակով , վորպեսզի ընթացիկ տարբա վա հետեանքները շատ բացասական ձեռք չներկայացվեն : Այսպիսի գեղագիտում ավելի լավ է , վոր նախարդ տարբիներին վերաբերեալ վնասները զուրա զրթեն հիմնական գրամագլուխց :

Այս կերպ վարվելով՝ առ 1-ի հոկտեմբերի հաշվեկշոփ իրական պասուից հետեւալ պատկերը կատանա :

ՊԵՍՍԻՎԻ ՀՅԴՎԱԾՆԵՐԸ		ՀԱՅՀԱՂՋՈՒՄ ԳՈՒՄԱԳԻՒՄՆԵՐԸ	ԸՆՄ ԳՐՔԵՐԸ	Պիտի ԳՐԵԼ	Առ 1-Ա ՄԱՅԻ Բ. ՀԱՅՀԱՂՋՈՒՄ ԳՈՒՄԱԳԻՒՄՆԵՐԸ	% ՀԱՅՀԱՂՋՈՒՄ ԳՈՒՄԱԳԻՒՄՆԵՐԸ
1.	Անկան գրամագլուխներ	5.000	—	5.000	32,4	
2.	Պարտատերեր—մատակարարողներ	6.560	—	6.560	42,6	
3.	Բանկեր	2.000	—	2.000	13,0	
4.	Ավանդներ	700	—	700	4,5	
5.	Մնացորդ տպրանքների հավելում	990	160	830	5,4	
6.	Զուտ ոպուտ	1.254	934	320	2,1	
	Հաշվեկշու	16.514	1.094	15.420	100	

Դանոքություն . Անկան գրամագլուխները և որաբառաները բերեա բերված են ընդհանուր զումարներով՝ տառեց բազկացացիք մասերի սուրբարաժանման :

Անհրաժեշտ ե ընդգծել , վոր պիտի լավ կը լինի վերաբերեալ բոլոր փոփոխությունները հաշվեկշումն կատարել միշտ հաշվական գրքերը վակելը (յեթե աելնեիքաղեա ոյզ համարակար ե) . հետեանքում մինք կունենանք իրական հաշվեկշումն նաև հաշվական գրքերում :

5. ՀԱՇՎԵԿՇՈՒ ԼՈՒՄԱՐՔՈՒՆԱԿ ԼԻՆԵԼԸ ՊԱՐՁԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Այժմ աեսնենք , թե ինչ է ներկայացնում վերև բերված իրական հաշվեկշուն՝ լուծարքունակության աեսակեալից , բայ վորում , պիտի տարրերել յերկու աեսակի լուծարքունակություն :

1. Գործառնական լուծարքունակություն , վոր առել և արդյոք ընկերության շրջանառու արժեքները բավական կը լինի լիիլ կերպով ու ժամանակին ծածկելու համար բոլոր պարտաքերը .

2. Հաշվեկշումն կամ լրիվ լուծարքունակություն , վոր առել և թե արդյոք յեթե ընկերությունը զագարեցնի յուր գործներությունը՝ նրա ակտիվի բոլոր արժեքները կարող են ծածկել ընկերության բոլոր պարտավորությունները լրիվ կերպով և համաձայն պասուիցի բոլոր հոգվածների :

Ի հարկե , մեզ համար ավելի հետաքրքր է ընկերության վը-ձարունակությունը գործի ընթացքում—այսինքն՝ նրա հաշվեկշուի գործառնական լուծարքունակությունը :

Լուծարքունակությունը վորուելու համար՝ մինք ակտիվի բուրութեանքները բաժանում ենք շրջանառու արժեքների (այսինքն այնպիսի միջոցների , վորոնք մասնակցում են շրջանառությանը) և արտաշրջանառու կամ անշարժ միջոցների , վորոնք շրջանառությանը չեն մասնակցում :

Ծրջանառու միջոցների թվին են պատկանում՝ անվիճելի կերպով . ա) կանխիկ դրամը , բ) ապրանքները , գ) անդամատակարման ձեռնարկները , դ) պարտավաններից սացած մուրհակները և թե կասկածելի պարտավանները) : Վիճելի ե այն , թե արժեքավոր թղթերն ինչպիսի արժեք պիտի համարել—շրջանառու , թե՝ արտաշրջանառու :

Այս գեղագում պիտի ուշադիր կերպով քննել , թե դրանք ի՞նչ արժեթղթեր են : Յեթե զրանք պետական փոխառության ոյնպիսի արժեթղթեր են , վորոնց հանգեցման ժամկեար 2—3 տարուց հետո յեւ , պարզ է , վոր նրանց պիտի հաշվեկշու արտաշրջանառու արժեքներ : Իսկ յեթե այդ արժեթղթերը (ամբողջը կամ նրանց մի մասը) կարելի յեւ փողի վերածել , այդ գեղագում , նման զումարները կարելի յեւ համապատասխան կերպով (ամբողջությամբ կամ մի մասով) շրջանառու արժեքներին միացնել :

Մեր Հաշվեկշռում արժեքավոր թղթերը յերկարառել փոխառության տօմսեր են. Հենց այդ պատճառով՝ մենք նրանց միացնում ենք արտաշրջանառու արժեքներին:

Ինքն ըստ ինքյան հասկանալի յէ, վար Հայկոսպում և Համեկոսպանկում ունեցած փայերը, ինչպես և շարժական ու անշարժ գույքը պիտի համարել արտաշրջանառու արժեքների, վորոնք շրջանառության մեջ վոչ մի մասնակցություն չունեն:

Վորոշելով ակտիվի շրջանառու արժեքների գումարը՝ պիտի պարզել, թե նրանք ծածկում են պասսիվի բոլոր պարտատերերի գումարները (կրեգիտորներին) թե՛ շրջանառության մեջ մասնակցում և նաև սեփական դրամագլուխների մի մասը: Այդ պարզելու համար՝ ակտիվի շրջանառու արժեքների գումարից պիտի հանել պասսիվի բոլոր պարտատերերի գումարը: Տարբերությունը ցույց կը տա մեզ թե ընկերության սեփական միջոցներից ինչ գումարը ժամանակցում և ակտիվի շրջանառու արժեքներին:

Ամեկայն, սեփական միջոցների մասնակցությունը շրջանառությանը դեռ ցույց չե տալիս, վար ընկերությունը վճարունակ է, այսինքն իսկապես ժամանակին և լրիվ կարող է յուր բոլոր պարտեկըքը վճարել:

Պիտի իմանալ, թե սեփական միջոցներից ի՞նչ գումար և մասնակցում շրջանառությանը: Սպառողական ընկերությունների համար Փինանսական բարեհաջող դրություն պիտի համարել այն դըմությունը, յերբ նրանք յերեք մաս փոխառու միջոցների դիմաց ունեն մի մաս սեփական միջոցներ: (Սեփական միջոցներ պիտի համարել ընկերության բոլոր դրամագլուխները, այս թվում նաև փայտիմարային դրամագլուխը, այլ և զուտ ոգուտի գումարը): Յւնթագրենք ընկերության տրամադրության տակ գտնվող փոխառությունը 1500 ռ. յէ, կնշանակի սեփական միջոցները պիտի 500 ռ. միեն (1500:500=3): Այս գեղքում ասում են—շրջանառության մեջ գտնվող սեփական միջոցների և սոսար միջոցների հարաբերությունը մեկին յերեք է:

Քանի վար մեզ հայտնի յէ, թե ակտիվի շրջանառու արժեքներն իրենց ամբողջությամբ միատեսակ արժեքներ չեն (որինակ՝ ապրանքների մեջ կան գժվար ծախվող պարանքներ, պարտապաները հանգցնում են իրենց պարտքերը վոչ միատեսակ ճշտապահությունը ու ժամանակին և այլն), մենք պետք ե իմաննք, թե սեփական դրամագլուխների գումարը մասն և կենդանի շրջանառության

մեջ—այսինքն՝ ակտիվի գյուրին (հեշտությամբ) իրավող արժեքների մեջ, և թե արդյոք փոխառու միջոցների մի մասը չկ' գտնվում ակտիվի գժվարին իրացվող արժեքների մեջ:

6. ԱԿՏԻՎԻ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԵՐԻ (ԸՍ ԼՈՒԾԱՐԳՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ)

Վորագեղի այս ամենն ավելի լավ ու պարզ ներկայացնենք՝ ակտիվի բոլոր արժեքները պետք և ստորաբաժանենք յերեք խմբի՝ համաձայն նրանց իրացման (բեղալիղացիայի) հնարավորություններին: 1. գյուրին իրացվող արժեքները: 2. գժվար իրացվող արժեքներ և 3. տնաշար արժեքներ: Այս աեսաննք, թե ի՞նչեւ են այդ խմբերում դասավորված սեփական ու փոխառու միջոցները:

Պարզ է, վար առաջին խմբու խումբը պիտի կազմեն շրջանառու արժեքները, իսկ վերջին խումբը—արտաշրջանառու արժեքները:

Մեր Հաշվեկշռի ակտիվ արժեքներն այդ խմբերին կարելի յէ բաժանել հետեւյալ կերպով:

1. Ֆրամարկդ—250 ռ.—ինք ըստ ինքյան ամբողջությամբ պիտի գնել 1-ին խմբի մեջ:

2. Ակրամնեներ—վախոնքի գնով—7430 ր. 1-ին խմբին պիտի միացնել բոլոր ապրանքները, բացառությամբ 425 ր. գժվար գանձավոր ապրանքների, վորոնք կը մտնեն 2-րդ խմբի մեջ:

3. Սենդամատակարարման ձեռնարկին—2910 ր. (Ճաշարան, փուռ)՝ ամբողջովին մտնեմ են 1-ին խմբի արժեքների մեջ:

4. Պարտապաններ—1500 ր. ամբողջությամբ կը մտնեն 1-ին խմբի արժեքների մեջ, բացի 350 ր. կասկածելի պարտապաններից, վորոնք 2-րդ խմբի մեջ կը մտնեն:

5. Ակտիվի մնացած բոլոր արժեքները կը մտնեն 3-րդ խմբի մեջ (գույք, փայտ և այլն):

Այս ստորաբաժանումից աեսանում ենք, վար մենք գժվար իրացվող արժեքների մեջ հաշվում ենք միայն արժեքները, վորոնք իսկապես վար գժվարությամբ են շրջանառություն (որինակ՝ գժվար վաճառվող ապրանքները, կասկածելի պարտատերերը): Մնացած արժեքները մենք գյուրին (կամ հեշտ) իրացվող ենք համարում, չը կատարելով ավելի մանրամասն ստորաբաժանում—ստուցին Հերթին իրացված, յերկրորդ հերթին իրացվող և այլն, բանի վար այդպիսի վերլուծումը գործնական հշանակություն չ' ունի և միայն մեր աշխատանքը կը բարդացնի:

Պասոսիք միջոցները (սեփական ու փոխառու) մէնք տեղավորում ենք այն հաշվով, զոր իմանանք, թե ակտակի անշարժ արժեքների վո՞ւ մասն և կլանաւմ սեփական գրամագլուխութ և վերջինիս ժամացորդն ինչքան և մասնակցում գժվարին իրացվող և ապա դյուրին իրացվող արժեքներին։ Միաժամանակ՝ մեզ հետաքրքրում են, թե պասոսիք փոխառու միջոցները չե՞ն գրված արդյոք գժվար իրացվագ կամ անշարժ արժեքների մեջ։

Վերոհիշյալ բոլոր գատառզությունները ազյուսակներով որոշած են հետեւյալ (23) յերեսում։

Ծանրություն։ Լիակատար պարզ պատկեր տալու համար՝ ակտիվում ապրանքները բերված են ինքնարժեքով, զորք մէնք ստացել ենք ապրանքների գումարից (վաճառքի գումագույքի հանելով պասոսիք ապրանքների մնացորդի հավելումների գումարը։ Իսկ զորպեսզի բարովին ակնհայտ լինելը՝ պասոսիքի հողածները մէնք տեղափորել ենք ակտիքի ազյուսակի ներքեւում։

Ի՞նչ ե առում 23 յերեսում բերված ազյուսակը։

Բնկերության ըրջանառու գրամագլուխ արժեքների գումարը հավասար է 11.260 բուրլու, վորից հեշտ իրացվագ են 10.485 ր. և գժվար իրացվող են 775 բուրլու արժեքները։ Բնկերությունն ունի անշարժ արժեքներ 3.330 բուրլու։ Հաշվեկշռի մեջ ըրջանառու գրամագլուխը հավասար է 77 %-ի։

Ազա՛ ընկերության սեփական միջոցներից ըրջանառությանը ժամանակում են 1990 բուրլի։ (այս թիվն ստանում ենք համելով 9270 բուրլու փոխառու միջոցների գումարը ըրջանառու արժեքների գումարից՝ 11.260 բուրլուց՝—ահօ ազյուսակի առաջին սյունակը)։ Հեշտ իրացվող արժեքներով ծածկվում են ամբողջությամբ վոչ միայն փոխառու միջոցները, այլ և սեփական միջոցների մի մասը—փայտաբարյին գրամագլուխը՝ 1215 սուրլին։ Ինքն ըստ ինքան համարական լին, վոր գժվար իրացվող ու անշարժ արժեքների մեջ են բացառապես սեփական միջոցները (հիմնարան, պահանագություն գրամագլուխներ և գումագլուխներ)։

Այսուղից մէնք անում նեք մի հիմնարան յեզրտկացություն՝ բնկերության հաշվեկշռով լուծարքունակ ե։

Սակայն գարձյալ մի հարց և ծագում՝ հաշվեկշռի լուծարքանակ լինելու բնկերության գնարաւմների կանոնավար լինելու տեսքեւից բավականաշատ սովոհով ե՞ արդյոք։ Սեփական միջոցներ

I. ՀԵՐՁԱՆԱՌՈՒ ԴՐԱՄԱԳԼԵԿԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ	ՀԵՐՁԻ ՎՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ԱՅ ՏԱՄ Ե Ն Է		ԱՅ Դ Ք Պ Ո Ւ Խ	
		ՀԱՅԱ ՀԱՅԱ ՀԱՅԱ ՀԱՅԱ	ՀԱՅԱ ՀԱՅԱ ՀԱՅԱ ՀԱՅԱ	ՀԱՅԱ ՀԱՅԱ ՀԱՅԱ ՀԱՅԱ	ՀԱՅԱ ՀԱՅԱ ՀԱՅԱ ՀԱՅԱ
I. ՀԵՐՁԱՆԱՌՈՒ ԴՐԱՄԱԳԼԵԿԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ					
1. Գրամագլուխ	250	2,2	—	250	—
2. Ապրանքներ (ինքնարժեք)	6.600	58,6	—	6.165	425
3. Մննդամատ. ձեռնարկներ	2.910	25,6	—	2.910	—
4. Պարտապաններ	1.500	13,6	—	1.150	350
ՀԱՅԱՆԵՐ ՄԵջ ԳՐԱՄԱԳԼՈՒԽ	11.260	100	77	10.485	775
II. ԱՐԺԱՇԵՐՁԱՆԱՌՈՒ ԴՐԱՄԱԳԼԵԿԻ					
5. Արժեքափոր թղթեր	250	—	—	—	250
6. Փայ Հայկապալում	100	—	—	—	100
7. Փայ Հայկապալրանկում	100	—	—	—	100
8. Գույք	2.880	—	—	—	2.880
ՀԱՅ. արաւաշրջ. գրամագլուխ	3.330	—	23	—	3.330
Հաշվեկշռին	14.590	—	100	10.485	775
100% հարաբերութ.	100%	—	—	72,0	5,3
9. ԱՅ ՏԱՄ Ե Ն Է					
I. ՓՈԽԱՌՈՒ ՄԻԶՈՑՆԵՐ					
1. Բանկեր	2.000	—	—	2.000	—
2. Պարտատարեր					
ա) Հայկապ.	3.560	—	—	3.560	—
բ) Հայդեստան	2.545	—	—	2.545	—
գ) Զանազան անձ. և հիմն.	465	—	—	465	—
3. Ավանդներ	700	—	—	700	—
ՀԱՅԱՆԵՐ ՓՈԽԱԱՊ միջոցներ	9.270	—	63,8	9.270	—
II. ՄԵՓԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ					
4. Փայագրամագլուխ	1.560	—	—	1.215	345
5. Հիմնարան	2.250	—	—	430	1.820
6. Պահեստի գրամագլուխ	1.190	—	—	—	1.190
7. Զուառ սպուտ	320	—	—	—	320
ՀԱՅ. սեփական միջոցներ	5.320	—	36,2	1.215	775
Հաշվեկշռին*	14.590	—	100	10.485	775

րի շրջանառության մեջ գտնվող մասը վորապիսի հարաբերություն մեջ է փոխառու միջոցների նկատմամբ և արդյոք այդ փոխառությունն այն փոխարարելությունն է, զորի մասին մենք վերուժ տաել ենք:

Վորապեսի իմանանք թե շրջանառության մեջ գտնված փոխառու միջոցների և սեփական միջոցների հարաբերությունն ինչպես պատկեր ունի՝ մենք փոխառու միջոցների զումարը բաժանում ենք սեփական միջոցների զումարին, այսինքն 9270 րուր. և ստանում ենք 4,6 կամ Հոմարյա թե 5. ուրիշ խոսքով առաջ շրջանառության մեջ գտնվող յուրաքանչյուր մի բուրլու դիմաց ընկերությունն ունի փոխառու միջոցների 5 բուրլիսամի մի դոմար: Իչարկե, այդ շատ է: Վերեք մենք ասացինք, վոր բարեհաջող գրաթյուն պիտի համարել, յեթե ամեն մի սեփական բուրլու դիմաց շրջանառությանը մեջ գտնվող յուրաքանչյուր մի բուրլու դիմաց ընկերությունն ունի փոխառու միջոցների 5 բուրլիսամի մի դոմար: Իչարկե, այդ շատ է: Վերեք մենք ասացինք, վոր բարեհաջող գրաթյուն պիտի համարել, յեթե ամեն մի սեփական բուրլու դիմաց շրջանառությանը մեջ գտնվող յուրաքանչյուր մի բուրլու դիմաց ընկերությունն ունի փոխառու միջոցների 5 բուրլիսամի մի դոմար:

Այսպիսով թեև մենք ունենք լուծարքունակ հաշվեկշիռ, սակայն այդ լուծարքունակությունը պայմանավորվում է շրջանառության մեջ սեփական միջոցների անբավարար մասնակցությամբ: այդ իսկ պատճառով կասկածներ են ծագում այն մասին, վոր հազիվ թե ընկերությունն ի վիճակի յի յուր ժամկետություն մարումները կանոնավոր կերպով հանդցնելու:

Ինչու համար և անհրաժեշտ ընկերության սեփական միջոցների շրջանառության մեջ մասնակցելու մենք կիսուներ հետագա յուրաքանչյուր:

Այդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է խորացնել հաշվեկշիռ վերլուծումը և պարզել թե ընկերության շրջանու դրամականական ինչ ժամանակում և պառույտ անում և թե ինքն, ընկերությունն ինչ ժամկետով և վարկեր ստանում, յերբ ապրանքն ապառիկ և դնում կամ բանկային վարկով և ոգափում: Դրամագիրի շրջելու (կամ պատմելու) արագության և վարկա վորման ժամկետի իրար համապատասխան լինելը մեզ ցույց կտա ընկերության իսկական վճարունակությունը:

7. ԴՐԱՄԱԳԻՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Դրամագիրի շրջանառության արագությունը վորոշել նշանառում է պարզել, թե քանի որվա ընթացքում շրջանառության մեջ

գտնվող ամբողջ դրամագլուխը մի անգամ պառույտ է անում: Այդ պարզելիս մի վորոշ ժամանակաշրջանի համար (յենթադրենք մի տարվա կամ մի յեռամսյակի համար) պիտի վերցնել ընջանառու արժեքների մնացորդները (դրամարկղը, ընթացիկ հաշվեները, ապրանքները վաճառքի գնով, պարտապանները) — յուրաքանչյուր ամսի 1-ի հաշվեկշիռների համաձայն, պիտի գումարել այդ բուրլը յնացորդները և բաժանել մնացորդների թվի վրա (որինակ, յեռամսյակի վերաբերմամբ մենք կունենանք չորս մնացորդ, տարվա վերաբերմամբ տասնյերեք մնացորդ): Այս կերպ մենք կրստանանք միջին մնացորդը կամ միջին շրջանառու դրամագլուխը գտնելը, բավական կլինի յուրաքանչյուր ամսի 1-ի մնացորդներն ունենալու փոխարեն վերցնել յեռամսյակի առաջին և վերջին մնացորդները, զումարել ու բաժանել յերկուսի: Այս կերպ աշխատանքն ավելի կլինամսի և հետեանքում մեծ տարբերություններ չեն ստացվի*): Եռուշն կերպ աշխատանքը կարելի յի կրծատել տարեկան միջին շրջանառու դրամագլուխը վորոշելիս — պետք և վերցնել յուրաքանչյուր յեռամսյակի 1-ին որվա և վերջին որվա մնացորդները գումարել (հոկտեմբերի 1-ի, հունվարի 1-ի, ապրիլի 1-ի, հունիսի 1-ի և հոկտեմբերի 1-ի), — և բաժանել 5-ի: Այս կերպ մենք կրստանանք տարեկան միջին շրջանառու դրամագլուխը:

Շրջանառու դրամագլուխը շրջանառության արագությունը վորոշելու համար՝ հարկավոր և վերցնել առեւտրական ու աննդամատակարման ձևունարկների զուս շրջանառությունը (վաճառքի ընդհանուր գումարը) և բաժանել այն միջին շրջանառու դրամագլուխը վրա — այդպիսով մենք կրստանանք՝ թե քանի անգամ և պատվել (շրջանառվել) շրջանառության դրամագլուխը:

Շրջանառության արագությունն որերով վորոշելու համար՝ յեռամսյակի որերի թիվը (90-ը) մենք կրստանենք պառույտների թվի վրա:

*.) Մենք իորհուրդ ենք տալիս այսպիսի գեղքերում վերցնել անպայման ամեն ամսվա մնացորդները, վորովհետեւ վորքան շատ թվերի զումարեց ենք մենք միջին ստանում, այնքան այդ միջինն իրականին ավելի յի մոտ: Աշխատանքը կրծատելը ներկա դեպքում մեր կարծիքով շատ ել նպատակահարմար չե, քանի վոր այդպիսի կրծատման հետեանքով միջինը շատ անգամ իրականին չի համապատասխանում:

Դանոր՝ բարգմանչից

Ապրանքները—թե շրջանառության միջոցների մեջ և թե զուտ վաճառքը վորոչելիս—մենք ցույց ենք տալիս վաճառքի գնով, վարովհետեւ սպառողական ընկերություններում ապրանքների հաշվառումը վաճառքի գնով և տարբում։

ՅԵՆԹԱԴՐԵՆՔ մենք ցանկանում ենք վորոշել 1926 թվի հունիս-սեպտեմբեր յեռամսյակի շրջանառու դրամագլուխ շրջանառության արագությունը։ Մենք վերեն արգեն տեսել ենք, վոր համաձայն 1926 թվի հոկտեմբեր 1-ի հաշվելչութիւնից շրջանառու դրամագլուխի գումարը 11.260 ռուբլի յէ։ Գրան պիտի ավելացնել միայն ապրանքների ինքնարժեքի վրա արված հավելումները—830 ռ.։ Այսպիսով՝ ակտիվում մենք ունենք ապրանքները վաճառքի գնով—և շրջանառու դրամագլուխի գումարը կլինի 12.090 ռուբլի։ Ճիշտ նույն կերպ մենք պիտի գտնենք շրջանառու դրամագլուխը հունիսի 1-ին։ ՅԵՆԹԱԴՐԵՆՔ թե այդ թիվը 10.310 ռուբլով կարողարացմի։ Հետեւ պես յեռամսյակի միջին շրջանառու դրամագլուխը կլինի։

$$\frac{12.090 + 10.310}{2} = 11.200 \text{ -ի կամ } 12.090 + 10.310 = 22.400$$

և 22.400 : 2 = 11.200-ի։

ՅԵՆԹԱԴՐԵՆՔ, թե ընկերության զուտ վաճառքը յեռամսյակի ընթացքում խանութներից ու ոննդամտակարարման ձեռնարկներից 18.000 ռուբլի յէ։

Այսպիսով՝ շրջանառու դրամագլուխը յեռամսյակի ընթացքում պատվել է 18.000 : 11.200 = 1.5 անգամ։ Շրջանառության արագությունն որերով կարող ենք վորոշել, յեթև յեռամսյակի որերի թիվը բաժանենք պատվաների թվի վրա։ այսինքն՝

$$90 \text{ ռ.} : 1.5 = 60 \text{ ռ.}$$

Այդ նույն թիվը կարող ենք ստանալ միանդամից՝ առանց գործ ունենալու կոսորտմաների հետ։ Դրա համար յեռամսյակի որերի թիվը պիտի բազմապատկել միջին շրջանառու դրամագլուխը և առացած թիվը բաժանել յեռամսյակի գումարով։ Արտահայտենք այդ գարձարու մեր թիվը որության գումարի վրա։ Արտահայտենք այդ գարձարու մեր թիվը։

$$90 \text{ ռ.} \times 11.200 = 1.008.000 \text{ ռ.}$$

$$1.008.000 : 18.000 = 60 \text{ ռ. (կոր թիվ)} :$$

Այսպիսով անցյալ յեռամսյակում ընկերության շրջանառու դրամագլուխը պատվել է 60 ռում։

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄՈՏ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԵջ ԳՏՆՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Այժմ անհրաժեշտ և վորոշել, թե ինչ ժամկետներով և ողպակում ընկերությունը՝ ապրանքային ու բանկային վարկ ստանալու գեպքում։

Դրա համար մենք վերցնում ենք ընկերության պարտքերի մնացորդները ըստոր պարտասերերին—(կարձատե վարկերը)—այն և ընկերության պարտքերը բանկերին, ապրանք մատակարարողներին և զանազան անձանց ու հիմնարկներին (ավանդները հաշվի չպիտի առնել—ավանդների նշանակության մասին մենք կիսումնք հետագայում)։ յեռամսյակի յուրաքանչյուր ամսի համար կամ, ծայրահեղ գեպքում, յեռամսյակի սկզբին և վերջին, գումարելով այդ մնացորդները և բաժանելով մնացորդների թիվը վրա, մենք կըստանանք յեռամսյակի պարտավորությունների միջն գումարը*։

Սպա ընկերության հաշվական գրքերով պիտի պարզել, թե յեռամսյակի ընթացքում պարտասերերին ինչ գումարի վճարումներ և արգած։ Բայց վորում՝ անհրաժեշտ և հաշվի առնել միայն պարտասերերին իսկապէս վճարված գումարները։ Ժամկետների ամեն տեսակի յերկարացումը, մուրհակների վերանորոգումը և այլն, վորոնք հաշվի գերեսով (պարտքի հաշվին) անց են կացրված պիտի զուրու ձեւու իրական վճարումները վորոշելիս։

Վորոկեսզի վարկավորման փաստական ժամկետը վորոշենք, պիտի և յեռամսյակի որերի թիվը (90 ռ.) բազմապատկենի յեռամսյակի պարտերի միջին մնացորդը և ստացած գումարը բաժանենք պարտասերերին իրավես հետ դարձրված պարտերի գումարի վրա։

ՅԵՆԹԱԴՐԵՆՔ յեռամսյակի ընթացքում հաշվական գրքերում հետեւյալ պարտավորությունների մնացորդներն ունենք։

*) Պարտավորությունների միջինը վորոշելիս անհրաժեշտ և ըստ հնարավորության վերցնել չափ թվական մնացորդներ (որինակ, տարեկան միջինը վորոշելիս 13 մնացորդ), ինկատի առնելով այն, վոր ինչքան չափ թվով մնացորդների հետ զարծ ունենանք, այնքան ավելի ձեշտ կվարոշենք պարտավորությունների միջին մնացորդը։ (Տես վերեի ձահսթությունը)։

ԱՄԻՍ-ԱՄՍԱԹԻՎ:	ԲԱՆԿԵՐԻՆ:	ՄԱՆԿԱԳՈՒՄ- ՄՈՂՆԵՐԻ. (ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆԴՎԵԼՈՒՄ Ի. Ա. Հ.)	ԲՆԳԱԺԻՆ:
Առ 1-ն հուլիսի	1.800	5.000	6.800
» 1-ն սպոտոսի	1.600	5.440	7.040
» 1-ն սեպտեմբերի	1.600	6.000	7.600
» 1-ն հոկտեմբերի	2.000	6.560	8.560
Գումար	7.000	23.000	30.000
Գարտավորությունների միջինը յեռամսյակում	1.750	5.750	7.500

Գարտավորությունների միջին մնացորդը, այսպիսով, մենք ստանում ենք գումարները բաժանելով մնացորդների թվի (4-ի) վրա :

Ապա հաշվական գրքերով պարզում ենք, վոր բանկերին նույն յեռամսյակի ընթացքում վճարված է 3.500 ռ. և մնացած պարտատերերին 13.400 ռ. —ընդամենը վճարված է 16.900 ռուբլի :

Կարձատեն վարկերի (առանց ավանդային գումարները) ոգտագործման ժամկետը վորոշվում է այս կերպ :

$$16 \cdot 900 \text{ ռ.} - 90 \text{ ռ.} \\ 7 \cdot 500 \text{ ռ.} - X \text{ ռ.}$$

Ա. ԽՈՏԵՂԻՑ՝

$$X = 90 \times 7500 : 16 \cdot 900 = 40 \text{ ռ.ի.}$$

Ավելի պարզ՝ նույնը կարելի յե այս ձեռով ներկայացնել :

$$90 \text{ ռ.} \times 7 \cdot 500 = 675 \cdot 000$$

$$675 \cdot 000 : 16 \cdot 900 = 40 \text{ ռ.ի. (կլորացրած)} :$$

Ուրեմն՝ ընկերությունն ոգտվում է 40 ռ. ժամկետ ունեցող վարկով :

Այս 40 ռ.ի վարկավորման ժամկետը վերաբերվում է պարտագործյունների բալոր ձեւերին (դրամական, ազգանքային և այլն) :

Վորպեսի վորոշենք, թե առանձին ձեւերի (բանկային, ազգանքային) վարկավորման ժամկետները բանի որվա են հավասար՝ առանձին ձեւերի վարկային գումարներից պետք է հանել յեռամ-

ստամսյակի միջին գումարներով և հանգեցվում կատարվել յեռամսյակի ընթացքում։ Յեռամսյակի որերի քիչը պիտի բազմապատկել պարտավորությունների միջին մնացորդով և բաժանել այն գումարի վրա, վոր գույց է տալիս յեռամսյակի ընթացքում կատարված իրական վնարությունը։

Նույն ձեռով կարելի յե պարզել, թե ընկերությունը վարկերի ի՞նչ ժամկետներով է ողափում առանձին հիմնարկներից—առանձին մատակարարներից, բանկերից և այլն։

Այսուղ պետք է հիշատակել, վոր վերև ցույց տված ձեռով մենք պարզում ենք վարկավորման փաստական ժամկետը, այսինքն այն ժամկետը, վորով ընկերությունը փոխառու միջոցներն ոգտագործում է յեռամսյակի ընթացքում։ Այդուք այդ ժամկետը համապատասխանում է այն ժամկետին, վոր ընկերությանը տարիս են վարկավորուղ հիմնարկները։

Վորպեսի այս պարզենք՝ անհրաժեշտ է մանրամասնորեն ուսումնասիրել, թե յեռամսյակի ընթացքում տեղի յեն ունեցել արդյոք մուրհակներ արտազըլու, կամ ժամկետներ յերկարացնելու գեղքեր և յեթե այո՛—ի՞նչ գումարների։ Յեթե յեղել են՝ այդ շումարները ևս պիտի ավելացնել իրական վճարումների գումարին և վարկավորման ժամկետը գտնել վերը ցույց տված ձեռով։

Յենթագրենք՝ ընկերությունը յեռամսյակի ընթացքում 16.900 ռ. փաստական վճարումներից բացի՝ ժամկետների յերկարացնեցում և ունեցել 2000 ռուբլու այս գեղքում պարտատերերի հաջող գերետը (պարտքը) կլինի 18.900 ռ., վարկավորման ժամկետը կլինի՝

$$90 \times 7 \cdot 500 = 675 \cdot 000$$

$$675 \cdot 000 : 18 \cdot 900 = 36 \text{ ռ.ի. (կլոր.)}$$

Աւրեմն՝ վարկավորող հիմնարկներն ընկերությանը տալիս են պարտագերի վճարման ժամկետ՝ միջին հաշվով 36 ռ.՝ սակայն նորհիվ ընկերության վճարումների թուլության ու ժամկետների յերկարացման—այդ ժամկետը բարձրանում է փաստորեն՝ մինչեւ 40 ռ.ի վրա։

Ծնկերության վճարումների խնդիրը պարզենք՝ այս հանդամանքը պիտի ի նկատի առնել։

**9. ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԻ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԱ-
ԳՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՄԻԶԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ
ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ ԳՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Այսպիսով մենք մի կողմից ունենք գրամագլուխ չըջանառության արագություն 60 որ, իսկ մյուս կողմից վարկագործան ժամկետ 40 որ։ Հարց է ծագում։ — բարեհաջող զրության մեջ և ընկերությունը և կարո՞ղ է արդյոք պարագաներին կանոնավոր ժամկետ յուր պարագաները։

Ինչպիս ահանում ենք՝ չըջանառության միջին արագության և վարկագործան միջին ժամկետի մեջ 20 որվա ասրբերություն կամ (60 որ — 40 որ)։ Այդ ասրբերությունը կարող է ծածկել ընկերության սեփական միջոցների այն ժամանք, վոր ժամնակցում և չըջանառությանը, (այս գումարի մեջ և նաև ընկերության զուտ պարուաը) — ինչպիս և յերկարած ավանդներով ու պետական վարկերով, յեթե, ի հարկե ընկերության արամագրության տակ այլ պիսիները կան։

Այժմ պիտի զորոշել, թե ընկերությունն ինչպիսի գումար (սեփական, ավանդային կամ յերկարած վարկ) պիտի ունենա յուր արամագրության տակ, փորձեալի 20 որվա յուր բացը ծածկել կարողանա։

Այդ զորոշելու համար մենք հետեւ գտանդություններն ունենք. ամբողջ չըջանառու գրամագլուխոր մի պատճու և անում 60 որվա ընթացքում։ Ինչպիսի գումար և հարկագործ, վորը մի պըտույտ անի 20 որվա ընթացքում։ Զեակերպենք այդ հետեւ յաջ։

12.090 ո. — 60 որ.

X ո. — 20 որ.

Այսպից

$$X = \frac{12.090 \times 20}{60} = 4030 \text{ ր.}$$

Այսինքն՝ ընկերության անհրաժեշտ լրացուցիչ միջոցների գումարը գտնելու համար՝ հարկավոր է շրջանառու դրամագլուխ գումարը բազմապատճել շրջանառության միջին արագության ու վարկագրության միջին ժամկետի տարբերության վրա և բաժանել դրամագլուխ շրջանառության որերի թվի վրա։ Կամ թիվով ձեռն կերպելով՝ այսպես։

$$12.090 \times 20 = 241.800 \text{ ո.}$$

$$241.800 : 60 = 4.030 \text{ ո.}$$

Նշանակում են՝ չըջանառության համար ընկերության անհրաժեշտ են 4.030 ո. լրացուցիչ միջոցներ (ավանդի, յերկարած վարկի կամ սեփական միջոցների ձևով)։

Հաշվեկշռի վերաւումից մենք գիտենք, վոր ընկերությունն ունի արդպիսի միջոցներ։

ա) Աւական գրամագլուխներ և ընկերության ուղարկուածներ 1990 ո.

բ) Յերկարած ավանդներ 700 ո.

գ) Հավելում մնացորդ ապրանքների վրա կամ սպագայի սպուտը 830 ո.

Ընդամենը՝ 3520 ո.

Այսպիսով՝ պակասում է չըջանառու միջոցների մի փոքր գումար 510 ո. (4.030—3.520)։ Այս գումարն և այն վճարային զեփեցիցիք (գրամագլուխ), վորն ընկերությունն ունենալու յի։ Յեղանակացությունն այն է, վոր ընկերությունն ապրելու յի գրամական վճարուաների վորոց գժիգարություններ, վորոնք ծրագիր կազմելու չփիտի մուտքվեն։

Ճիշտ նույն յերկացացությանը կզանք նաև ավելի հեշտ ու տրամադրել։ Շրջանառու գրամագլուխների մի պատճու և անում 60 որվա ընթացքում։ Ինչպիս գումար կարելի յի ունենալ 40 որվա ժամկետով վարկագործը պարագաների հետ հանգցնելու համար։

12.090 ո. — 60 որ.

X ո. — 40 որ.

Այսպից

$$X = \frac{12.090 \times 40}{60} = 8060 \text{ ր.}$$

Աւել խոսքով ասած պիտի շրջանառու գրամագլուխը բազմապատճենի վարկագործան ժամկետով ու ստացածը բաժանենի շրջանառության արագությունը ցույց տվող որերի թվի վրա։

Հաշվեկշռի մենք գիտենք, վոր կարճատե սպարագլորությունների գումարը 8.570 ուռելի յի, հետեւապես ժամկետային վճարուաները հանգցնելու համար պակասում է 510 ուռելի (8570 ո. — 8.060 ո.)։

10. ՎԱՐԱՅԻՆ ՊԱԿԱՍՈՐԴԸ (ԴԵՖԻՑԻՏԸ) ԴԱՄԿԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

ինչպես ծածկել ընկերության վճարումների այլ բացը և ինչպես անել, զոր ընկերությունը լինակատար կերպով վճարումնակ գառնա:

Վերահեշտեց պարզ եւ զոր՝

1. Կամ պիտի սեփական զբաժաղվիսի ըթանառու մասը չըլ չանառու զբաժաղվիսի մեջ ավելացնել 510 ոուրլով՝ հասցնելով այն 2·500 ո.,

2. Կամ պիտի արագացնել զբաժաղվիսի ըթանառությունը և

3. Կամ պիտի պարատառերց սուացվող վարկերի ժամկետները յերկարացնել:

Ի հարկե, անհրաժեշտ և այս լուր միջոցներին միանդամից կիմել, սակայն այդ ապագա ծրագրի գործն եւ, զորին մենք հետագայում կդառնանք:

Այստեղ միայն ցույց տանք, թե ինչ կերպ պիտի վորոշել վարկագործան համար պահանջվող ժամկետը կամ ըթանառության կանհրաժեշտ արագությունը՝ խուսափելու համար վճարացն զերշիտեց:

12·090 ո. · ըթանառու զբաժաղվութիր մի պառւյտ և անում 60 որվա ընթացքում. ինչպիսի ժամկետ և անհրաժեշտ, վորպեսզի ըթանառու զբաժաղվից 8·570 ո. հետ գտնան ընկերության վը վամարկղը՝ կարձատե վարկերը հանդցներու համար :

12·090 ո. — 60 որ.

8·570 ո. — X որ.

Այստեղից՝

$$X = \frac{60 \times 8.570}{12.090} = 42\frac{1}{2} \text{ որ.}$$

Առիւ խոսքով ասած՝ հարկավոր և ըթանառության արագությանը ցույց տվող որերի թիվը բազմապատկել պարտավորությանների գումարը և բաժանել ըթանառու զբաժաղվի վրա:

Ենք ընդհակառակը՝ վորպեսզի վորոշենք, թե ինչ արագությամբ և հարկավոր պատեցնել ըթանառու զբաժաղվութիր, պիտի

վարկավորման ժամկետը բազմապատկենք ըթանառու զբաժաղվով և բաժանենք պարտավորությունների (պարտքերի) գումարի վրա:

$$40 \text{ որ} \times 12\cdot090 = 483\cdot600$$

$$483\cdot600 : 8\cdot570 = 56 \text{ որ (կլոր)}$$

11. ՅԵՐԿԱՐԱՏԵՎ ՎԱՐԿԵՐԻ (ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՎԱՆԴՆԵՐԻ) ԴԵՐԸ ԾՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԶ

